

**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 թվականի նոյեմբերի 29-ի թիվ
1235/2011 ԿԱՆՈՆԱԿԱՐԳ (ԵՄ)**

**«Անվադողերի՝ թաց պայմաններում կցորդման դասակարգման, գլորման
դիմադրության չափման եւ ստուգման ընթացակարգի մասին»
Եվրոպական խորհրդարանի եւ
Խորհրդի թիվ 1222/2009 կանոնակարգը (ԵՀ) փոփոխող
(Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)**

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ,

հաշվի առնելով «Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագիրը,
հաշվի առնելով Եվրոպական խորհրդարանի եւ Խորհրդի 2009 թվականի
նոյեմբերի 25-ի «Վառելիքի արդյունավետության եւ այլ կարելի պարամետրերի
առումով անվադողերի պիտակավորման մասին» թիվ 1222/2009 կանոնակարգը
(ԵՀ)¹ եւ մասնավորապես՝ դրա 11(ա) եւ (գ) հոդվածները,

քանի որ՝

- 1) Եվրոպական խորհրդարանի եւ Խորհրդի թիվ 1222/2009 կանոնակարգի
(ԵՀ) նպատակն է ստեղծել պիտակավորման միջոցով անվադողերի
պարամետրերի վերաբերյալ ներդաշնակեցված տեղեկությունների
տրամադրման շրջանակ՝ վերջնական օգտագործողներին հնարավորություն
տալով անվադողեր գնելիս կատարել տեղեկացված ընտրություն.
- 2) անվադողերի պտույտի հակազդման հիման վրա որոշվում է դրանց
վառելիքի օգտագործման արդյունավետության դասակարգը: Պտույտի
հակազդման չափումը պետք է լինի վերարտադրելի. տարբեր
լաբորատորիաներում միեւնույն անվադողերի փորձաստուգումների
արդյունքները պետք է լինեն նույնը՝ տարբեր մատակարարներից ստացվող

¹⁾ ՊՏ L 342, 22.12.2009թ., էջ 46:

- անվադողերի բավարար համեմատությունն ապահովելու համար: Բացի այդ, փորձաստուգումների արդյունքների վերարտադրելիության բարձր մակարդակի դեպքում բացառվում է, որ միեւնույն անվադողերը փորձաստուգելիս շուկայի վերահսկողության մարմիններն անվադողերի մատակարարներից ստանան տարբեր արդյունքներ.
- 3) պտույտի հակազդումը չափելու համար փորձաստուգման լաբորատորիաների համապատասխանեցման ընթացակարգով կբարելավվի փորձաստուգման արդյունքների վերարտադրելիությունը.
 - 4) քանի որ ԻՍՕ մակարդակով մշակվել է թաց ճանապարհներին կցորդումը փորձաստուգելու համապատասխան ներդաշնակեցված մեթոդ, այժմ պետք է ներկայացվի C2 եւ C3 դասի անվադողերի՝ թաց պայմաններում կցորդման դասակարգում՝ թիվ 1222/2009 կանոնակարգի (ԵՀ) 11(ա) հոդվածին համապատասխան.
 - 5) թիվ 1222/2009 կանոնակարգի (ԵՀ) IV հավելվածում սահմանված համապատասխանության ստուգման կարգի հստակության մակարդակը պետք է բարձրացվի՝ սահմանելով շեմեր, որոնց հիման վրա պիտակավորման պահանջների համար օգտագործվող՝ հայտարարված արժեքները համարվում են տվյալ կանոնակարգին համապատասխանող.
 - 6) ուստի թիվ 1222/2009 կանոնակարգը (ԵՀ) պետք է համապատասխանաբար փոփոխվի.
 - 7) սույն կանոնակարգով սահմանված միջոցները համապատասխանում են թիվ 1222/2009 կանոնակարգի (ԵՀ) 13-րդ հոդվածով ստեղծված կոմիտեի եզրակացությանը,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ.

*Հոդված 1***Թիվ 1222/2009 (ԵՀ) կանոնակարգում կատարվող փոփոխությունները**

Թիվ 1222/2009 կանոնակարգում (ԵՀ) կատարվել են հետևյալ փոփոխությունները՝

- 1) I հավելվածի «Ա» մաս. Վառելիքի օգտագործման արդյունավետության դասեր. առաջին նախադասությունը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ՝
«Վառելիքի օգտագործման արդյունավետության դասը պետք է սահմանվի պտույտի հակազդման գործակցի ($\eta_{\text{ՀԳ}}$) հիման վրա՝ ստորեւ նշված «A»-ից «G» սանդղակի համաձայն, եւ չափվի ՄԱԿ-ի ԵՏՀ կոնվենցիայի թիվ 117 կանոնակարգի VI հավելվածի ու դրա հետագա փոփոխությունների համաձայն ու համապատասխանեցվի IVա հավելվածով սահմանված կարգով:».
- 2) I հավելվածի «Բ» մաս. Թաց պայմաններում կցորդման դասեր. տեքստը եւ աղյուսակը շարադրվել են հետևյալ խմբագրությամբ՝
 - «1. C1 դասի անվադողերի՝ թաց պայմաններում կցորդման դասը պետք է սահմանվի թաց պայմաններում կցորդման մակարդակի «G» ինդեքսի հիման վրա՝ ստորեւ ներկայացված աղյուսակում նշված «A»-ից «G» սանդղակի համաձայն, հաշվարկվի 3-րդ կետի համաձայն եւ չափվի V հավելվածին համապատասխան:
 2. C2 եւ C3 դասի անվադողերի՝ թաց պայմաններում կցորդման դասը պետք է սահմանվի թաց պայմաններում կցորդման մակարդակի «G» ինդեքսի հիման վրա՝ ստորեւ ներկայացված աղյուսակում նշված «A»-ից «G» սանդղակի համաձայն, հաշվարկվի 3-րդ կետի համաձայն եւ չափվի ԻՍՕ 15222:2011 ստանդարտի համաձայն, ըստ որի պետք է օգտագործվեն ստանդարտ տրամաչափարկման փորձաստուգում անցած հետևյալ անվադողերը (ՍՏՓԱ).

- i) C2 դասի անվադողերի համար՝ USΦԱ 225/75 R 16 C, ՓՆԱՀ (ASTM) F 2872-11.
- ii) C3 դասի անվադողերի համար, որոնց պրոֆիլի անվանական լայնությունը 285 մմ-ից պակաս է՝ USΦԱ 245/70R19,5, ՓՆԱՀ F 2871-11.
- iii) C3 դասի անվադողերի համար, որոնց պրոֆիլի անվանական լայնությունը 285 մմ-ից ավել կամ դրան հավասար է, USΦԱ 315/70R22,5, ՓՆԱՀ F 2870-11:

3. Թաց պայմաններում կցորդման ինդեքսի հաշվարկը (G)

$$G = G(T) - 0,03$$

որտեղ՝ $G(T)$ -ն փորձաստուգման մեկ պարբերաշրջանում որոշված՝ փորձարկման ենթակա անվադողի՝ թաց պայմաններում կցորդման ինդեքսն է

C1 դասի անվադողեր		C2 դասի անվադողեր		C3 դասի անվադող	
G	Թաց պայմաններում կցորդման դաս	G	Թաց պայմաններում կցորդման դաս	G	Թաց պայմաններում կցորդման դաս
$1,55 \leq G$	A	$1,40 \leq G$	A	$1,25 \leq G$	A
$1,40 \leq G \leq 1,54$	B	$1,25 \leq G \leq 1,39$	B	$1,10 \leq G \leq 1,24$	B
$1,25 \leq G \leq 1,39$	C	$1,10 \leq G \leq 1,24$	C	$0,95 \leq G \leq 1,09$	C
Դատարկ	D	Դատարկ	D	$0,80 \leq G \leq 0,94$	D
$1,10 \leq G \leq 1,24$	E	$0,95 \leq G \leq 1,09$	E	$0,65 \leq G \leq 0,79$	E
$G \leq 1,09$	F	$G \leq 0,94$	F	$G \leq 0,64$	F
Դատարկ	G	Դատարկ	G	Դատարկ	G»:

- 3) IV հավելված. Ստուգման ընթացակարգը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

*«ՀԱՎԵԼՎԱԾ IV***Ստուգման ընթացակարգը**

Վառելիքի օգտագործման հայտարարված արդյունավետության, թաց պայմաններում կցորդման դասերի, ինչպես նաև պտույտի արտաքին աղմուկի հայտարարված դասի եւ հայտարարված արժեքի համապատասխանությունը պետք է գնահատվի անվադողի յուրաքանչյուր տեսակի կամ անվադողերի յուրաքանչյուր խմբաքանակի համար՝ մատակարարի հայեցողությամբ՝ հետեւյալ ընթացակարգերից որեւէ մեկի համաձայն՝

- ա) i) սկզբում փորձարկվում է մեկ անվադող կամ անվադողերի հավաքածու: Եթե չափված արժեքները համապատասխանում են 1-ին աղյուսակում սահմանված թույլատրելի շեղումների տիրույթում հայտարարված դասերին կամ պտույտի արտաքին աղմուկի հայտարարված արժեքին, ապա փորձարկումը հաջող է անցել, եւ
- ii) եթե չափված արժեքները չեն համապատասխանում 1-ին աղյուսակում սահմանված տիրույթում հայտարարված դասերին կամ պտույտի արտաքին աղմուկի հայտարարված արժեքին, ապա փորձարկվում են եւս երեք անվադող կամ անվադողերի հավաքածու: Փորձարկված երեք անվադողերի կամ անվադողերի հավաքածուի չափումների միջին արժեքն օգտագործվում է 1-ին աղյուսակում սահմանված տիրույթում հայտարարված տվյալների հետ համապատասխանությունը գնահատելու համար, կամ
- բ) եթե պիտակավորված դասերը կամ արժեքները ստացվել են տեսակը հաստատող փորձարկումների արդյունքների հիման վրա , որոնք ձեռք են բերվել 2001/43/ԵՀ հրահանգի, թիվ 661/2009 կանոնակարգի (ԵՀ) կամ ՄԱԿ-ի ԵՏՀ թիվ 117 կանոնակարգի եւ դրա հետագա փոփոխությունների համաձայն, ապա անդամ պետությունները կարող են օգտագործել

անվադողերի համար իրականացված համապատասխանության ստուգիչ փորձարկումների արդյունքում ստացված չափումների տվյալները:

Համապատասխանության ստուգիչ փորձարկումների արդյունքում ստացված չափումների տվյալները գնահատելիս պետք է հաշվի առնել 1-ին աղյուսակում սահմանված թույլատրելի շեղումները:

Աղյուսակ 1

Չափված պարամետրը	Ստուգման ընթացքում թույլատրելի շեղումները
Պտույտի հակազդման գործակից (վառելիքի օգտագործման արդյունավետություն)	Համապատասխանեցված, չափված արժեքը չպետք է բարձր լինի հայտարարված դասի վերին սահմանից (ամենաբարձր ՊՀԳ) ավելի, քան 0,3 կգ/1 000 կգ-ով:
Պտույտի արտաքին աղմուկ	Չափված արժեքը չպետք է լինի N հայտարարված արժեքից բարձր ավելի, քան 1դԲ(Ա)-ով:
Թաց պայմաններում կցորդում	Չափված արժեքը չպետք է լինի հայտարարված դասի ստորին սահմանից (G-ի ամենացածր արժեքը) ավելի ցածր:»:

- 4) Սույն կանոնակարգի հավելվածում նշված տեքստը լրացվել է որպես IVա հավելված:

Հոդված 2

Ուժի մեջ մտնելը

Սույն կանոնակարգն ուժի մեջ է մտնում *Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում* հրապարակվելուց հետո 20-րդ օրը:

Սույն կանոնակարգը կիրառվում է 2012 թվականի մայիսի 30-ից:

Սույն կանոնակարգն ամբողջությամբ պարտադիր է եւ անմիջականորեն կիրառելի է բոլոր անդամ պետություններում:

Կատարված է Բրյուսելում 2011 թվականի նոյեմբերի 29-ին:

Հանձնաժողովի կողմից՝

Նախագահ

Ժոզե Մանուել ԲԱՂՈՉՈՒ

*ՀԱՎԵԼՎԱԾ**ՀԱՎԵԼՎԱԾ IVա***Պտույտի հակազդումը չափելու համար լաբորատորիայի
համապատասխանեցման ընթացակարգը****1. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ**

Ելնելով լաբորատորիայի համապատասխանեցման կարգի նպատակներից՝ կիրառվում են հետևյալ սահմանումները.

- 1) «էտալոնային լաբորատորիա» նշանակում է լաբորատորիա, որը մաս է կազմում այն լաբորատորիաների ցանցի, որոնց տեղեկատվական փաստաթղթերը համապատասխանեցման ընթացակարգի նպատակով հրապարկվել են *Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում*, եւ որը կարող է ապահովել 3-րդ բաժնում սահմանված փորձարկումների արդյունքների ճշգրտությունը.
- 2) «փորձարկման լաբորատորիա» նշանակում է լաբորատորիա, որտեղ անցկացվում է համապատասխանեցման ընթացակարգը, սակայն որը էտալոնային լաբորատորիա չէ.
- 3) «համապատասխանեցման նպատակով օգտագործվող անվադող» նշանակում է անվադող, որը փորձարկվում է համապատասխանեցման ընթացակարգ իրականացնելու համար.
- 4) «համապատասխանեցման նպատակով օգտագործվող անվադողերի հավաքածու» նշանակում է համապատասխանեցման նպատակով օգտագործվող հինգ կամ ավելի անվադողերի հավաքածու.
- 5) «սահմանված արժեք» նշանակում է համապատասխանեցման նպատակով օգտագործվող մեկ անվադողի հաշվարկային արժեք, որը չափվում է համապատասխանեցման ընթացակարգի համար

օգտագործվող՝ էտալոնային լաբորատորիաների ցանցում ընդգրկված պայմանական լաբորատորիայում:

2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

2.1. Սկզբունքը

Էտալոնային լաբորատորիայում (լ) չափված պտույտի հակազդման գործակիցը ($\mathcal{M}_{\mathcal{F}_z}$) համապատասխանեցվում է էտալոնային լաբորատորիաների ցանցի կողմից սահմանված արժեքին:

Փորձարկման լաբորատորիայում (փ) ստացված $\mathcal{M}_{\mathcal{F}_z}$ -ն համապատասխանեցվում է ցանցի՝ դրա կողմից ընտրված մեկ էտալոնային լաբորատորիայի միջոցով:

2.2. Անվադողի ընտրության պահանջները

Համապատասխանեցման ընթացակարգի համար պետք է ընտրվի համապատասխանեցման նպատակով օգտագործվող հինգ կամ ավելի անվադողի հավաքածու՝ ստորեւ ներկայացված չափանիշների հիման վրա: Մեկ լրակազմ պետք է ընտրվի ընդհանուր C1 եւ C2 անվադողերի համար, եւ մեկ հավաքածու՝ C3 անվադողերի համար.

ա) համապատասխանեցման նպատակով օգտագործվող անվադողերի հավաքածուի ընտրությունը պետք է կատարվի այնպես, որ այն ներառի մի շարքի ընդհանուր C1 եւ C2 անվադողերի կամ C3 անվադողերի տարբեր $\mathcal{M}_{\mathcal{F}_z}$ -ներ: Ցանկացած դեպքում անվադողի հավաքածուի ամենաբարձր $\mathcal{M}_{\mathcal{F}_z}$ -ի եւ ամենացածր $\mathcal{M}_{\mathcal{F}_z}$ -ի միջեւ տարբերությունը պետք է առնվազն հավասար լինի հետեւյալին.

i) 3 կգ/տ՝ C1 եւ C2 անվադողերի համար, եւ

ii) 2 կգ/տ՝ C3 անվադողերի համար.

բ) հավաքածուի՝ համապատասխանեցման նպատակով օգտագործվող յուրաքանչյուր անվադողի $\mathcal{M}_{\mathcal{F}_z}$ -ի հայտարարված արժեքի հիման վրա

փորձարկման կամ էտալոնային լաբորատորիայում (փ կամ լ) որոշված ՊՀԳ_z -ն պետք է ավելացվի հետեյալ եղանակով եւ բաժանվի հավասարաչափ.

- i) 1,0 +/- 0,5 կգ/տ՝ C1 եւ C2 անվադողերի համար, եւ
 - ii) 1,0 +/- 0,5 կգ/տ՝ C3 անվադողերի համար.
- զ) համապատասխանեցման նպատակով օգտագործվող՝ ընտրված յուրաքանչյուր անվադողի պրոֆիլի լայնությունը պետք է լինի.
- i) < 245 մմ՝ C1 եւ C2 անվադողերը չափող մեքենաների համար, եւ
 - ii) < 385 մմ՝ C3 անվադողերը չափող մեքենաների համար.
- դ) համապատասխանեցման նպատակով օգտագործվող՝ ընտրված յուրաքանչյուր անվադողի արտաքին տրամագիծը պետք է լինի.
- i) 510-ից 800 մմ՝ C1 եւ C2 անվադողերը չափող մեքենաների համար, եւ
 - ii) 771-ից 1 143 մմ՝ C3 անվադողերը չափող մեքենաների համար.
- ե) կրող ունակության ինդեքսի արժեքները պետք է համապատասխանաբար լինեն փորձարկման ենթակա անվադողերի տիրույթում՝ ապահովելով, որ պտույտի հակազդման ուժի (ՊՀՈԻ) արժեքները նույնպես լինեն փորձարկման ենթակա անվադողերի տիրույթում:
- Համապատասխանեցման նպատակով օգտագործվող յուրաքանչյուր անվադող պետք է օգտագործվելուց առաջ ստուգվի եւ փոխարինվի, եթե.
- ա) դրա վիճակն այնպիսին, որ այն դառնում է հետագա փորձարկումների համար ոչ պիտանի, եւ (կամ)
 - բ) ցանկացած մեքենայի տեղաշարժի համար արված ճշգրտումներից հետո առկա են ՊՀԳ_z -ի շեղումներ, որոնք ավելի վաղ

ներկայացված չափումների արժեքների համեմատությամբ 1,5 տոկոսով ավելի են:

2.3. Չափման մեթոդը

Էտալոնային լաբորատորիան պետք է համապատասխանեցման նպատակով օգտագործվող յուրաքանչյուր անվադող չափի չորս անգամ եւ պահպանի վերջին երեք արդյունքները հետագա վերլուծության համար՝ համաձայն ՄԱԿ-ի ԵՏՀ կոնվենցիայի թիվ 117 կանոնակարգի ու դրա հետագա փոփոխությունների եւ կատարելով ՄԱԿ-ի ԵՏՀ կոնվենցիայի թիվ 117 կանոնակարգի VI հավելվածի 3-րդ պարբերության մեջ ու դրա հետագա փոփոխություններով սահմանված պայմանները:

Փորձարկման լաբորատորիան պետք է համապատասխանեցման նպատակով օգտագործվող յուրաքանչյուր անվադող չափի $(n + 1)$ անգամ, որտեղ n -ը սահմանված է 5-րդ բաժնում, եւ պահպանի վերջին n արդյունքը հետագա վերլուծության համար՝ համաձայն ՄԱԿ-ի ԵՏՀ կոնվենցիայի թիվ 117 կանոնակարգի ու դրա հետագա փոփոխությունների VI հավելվածի 4-րդ պարբերության եւ կատարելով ՄԱԿ-ի ԵՏՀ կոնվենցիայի թիվ 117 կանոնակարգի VI հավելվածի 3-րդ պարբերության մեջ ու դրա հետագա փոփոխություններով սահմանված պայմանները:

Համապատասխանեցման նպատակով օգտագործվող անվադողի չափման յուրաքանչյուր դեպքում անվադող/անիվ հավաքվածքը պետք է հեռացվի մեքենայից եւ ՄԱԿ-ի ԵՏՀ կոնվենցիայի թիվ 117 կանոնակարգի ու դրա հետագա փոփոխությունների VI հավելվածի 4-րդ պարբերության մեջ նշված փորձարկման ամբողջ ընթացակարգը պետք է կրկին իրականացվի սկզբից:

Փորձարկման կամ էտալոնային լաբորատորիան պետք է հաշվարկի.

ա) համապատասխանեցման նպատակով օգտագործվող յուրաքանչյուր անվադողի չափված արժեքը՝ ՄԱԿ-ի ԵՏՀ կոնվենցիայի թիվ 117 կանոնակարգի VI հավելվածի 6.2-րդ եւ 6.3-րդ պարբերություններում եւ

դրա հետագա փոփոխություններում նշված յուրաքանչյուր չափման համար (այսինքն՝ ճշգրտված 25 °C-ի եւ 2 մ արգելակի թմբուկի պայմաններում)։

- բ) համապատասխանեցման նպատակով օգտագործվող յուրաքանչյուր անվադողի չափված վերջին երեք արժեքների (էտալոնային լաբորատորիաների դեպքում) կամ n արժեքների (փորձարկման լաբորատորիաների դեպքում) միջին արժեքը, եւ
- գ) թույլատրելի շեղումները (σ_s) հետեւյալ բանաձեւով։

$$\sigma_s = \sqrt{\frac{1}{p} \cdot \sum_{i=1}^p \sigma_{m,i}^2}$$

$$\sigma_{m,i} = \sqrt{\frac{1}{n-2} \cdot \sum_{j=2}^n \left(Cr_{i,j} - \frac{1}{n-1} \cdot \sum_{j=2}^n Cr_{i,j} \right)^2}$$

որտեղ՝

i -ը 1-ից p ցուցիչն է՝ համապատասխանեցման նպատակով օգտագործվող անվադողերի թվի համար։

j -ը 2-ից n ցուցիչն է՝ համապատասխանեցման համար օգտագործվող տվյալ անվադողի յուրաքանչյուր չափման կրկնությունների թիվը։

n -ն անվադողի չափումների կրկնությունների թիվն է ($n \geq 4$)

p -ն համապատասխանեցման նպատակով օգտագործվող անվադողերի թիվն է ($p \geq 5$)

2.4. Հաշվարկների եւ արդյունքների համար օգտագործվող տվյալների ձեւաչափերը

- Չափված ՊՀԳ-ի արժեքները, որոնք ճշգրտվել են արգելակի թմբուկի եւ ջերմաստիճանի հետ կապված, պետք է կլորացվեն մինչեւ 2 տասնորդական նիշ:
 - Այնուհետեւ բոլոր թվանշաններով կատարվում են հաշվարկներ. այլեւս կլորացումներ չպետք է արվեն՝ բացառությամբ համապատասխանեցման վերջնական հավասարումների:
 - Թույլատրելի շեղումների բոլոր արժեքները պետք է ներկայացվեն մինչեւ 3 տասնորդական նիշով:
 - ՊՀԳ-ի բոլոր արժեքները պետք է ներկայացվեն մինչեւ 2 տասնորդական նիշով:
 - Համապատասխանեցման բոլոր գործակիցները (A₁, B₁, A_{2փ} եւ B_{2փ}) պետք է կլորացվեն եւ ներկայացվեն մինչեւ 4 տասնորդական նիշով:
3. ԷՏԱԼՈՆԱՅԻՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Համապատասխանեցման նպատակով օգտագործվող յուրաքանչյուր անվադողի սահմանված արժեքները պետք է որոշվեն էտալոնային լաբորատորիաների ցանցի կողմից: Երկու տարի անց ցանցը պետք է գնահատի սահմանված արժեքի կայունությունը եւ հիմնավորվածությունը:

Ցանցում ընդգրկված յուրաքանչյուր էտալոնային լաբորատորիա պետք է համապատասխանի ՄԱԿ-ի ԵՏՀ կոնվենցիայի թիվ 117 կանոնակարգի VI հավելվածում եւ դրա հետագա փոփոխություններում նշված մասնագրերին եւ ունենա հետեւյալ թույլատրելի շեղումները (օ₂).

- i) C1 եւ C2 դասի անվադողերի համար՝ 0,05 կգ/տ-ից ոչ ավելի, եւ
- ii) C3 դասի անվադողերի համար՝ 0,05 կգ/տ-ից ոչ ավելի:

Համապատասխանեցման նպատակով օգտագործվող անվադողերի հավաքածուները, որոնք համապատասխանում են 2.2-րդ բաժնի մասնագրերին, պետք է չափվեն ցանցի յուրաքանչյուր էտալոնային լաբորատորիայում՝ 2.3-րդ բաժնին համապատասխան:

Համապատասխանեցման նպատակով օգտագործվող յուրաքանչյուր անվադողի սահմանված արժեքը համապատասխանեցման նպատակով օգտագործվող այդ անվադողի համար ցանցի էտալոնային լաբորատորիայի կողմից տրված՝ չափված արժեքների միջինն է:

4. ԷՏԱԼՈՆԱՅԻՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՐԺԵՔՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Յուրաքանչյուր էտալոնային լաբորատորիա (i) պետք է համապատասխանեցվի համապատասխանեցման նպատակով օգտագործվող անվադողերի հավաքածուի սահմանված արժեքներին՝ օգտագործելով գծային ռեգրեսիայի տեխնիկան, $A1_i$ եւ $B1_i$, որը հաշվարկվում է հետեւյալ բանաձեւով.

$$\eta_{\text{ՀԳ}} = A1_i * \eta_{\text{ՀԳ}_{\text{Տ, i}}} + B1_i$$

որտեղ՝

$\eta_{\text{ՀԳ}}$ -ն պտույտի հակազդման գործակցի սահմանված արժեքն է.

$\eta_{\text{ՀԳ}_{\text{Տ, i}}}$ -ն «i» էտալոնային լաբորատորիայի կողմից չափված պտույտի հակազդման գործակցի արժեքն է (այդ թվում՝ ջերմաստիճանի եւ արգելակի թմբուկի հետ կապված ճշգրտումները):

5. ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Փորձարկման լաբորատորիաները կրկին իրականացնում են համապատասխանեցման ընթացակարգը երկու տարին առնվազն մեկ

անգամ եւ իրականացնում են դա միշտ մեքենայի ցանկացած նշանակալից փոփոխությունից կամ մեխանիկական կառավարմամբ անվադողերի մոնիթորինգի տվյալներում տեղի ունեցած ցանկացած փոփոխությունից հետո:

Հինգ տարբեր անվադողերի սովորական հավաքածուն, որը համապատասխանում է 2.2-րդ բաժնում նշված մասնագրերին, պետք է չափվի փորձարկման լաբորատորիայում եւ մեկ էտալոնային լաբորատորիայում՝ 2.3 բաժնին համապատասխան: Փորձարկման լաբորատորիայի պահանջով կարող են փորձարկվել համապատասխանեցման նպատակով օգտագործվող ավելի, քան հինգ անվադող:

Համապատասխանեցման նպատակով օգտագործվող անվադողերի հավաքածուն ընտրված էտալոնային լաբորատորիային է տրամադրվում փորձարկման լաբորատորիայի կողմից:

Փորձարկման լաբորատորիան (փ) պետք է համապատասխանի ՄԱԿ-ի ԵՏՀ կոնվենցիայի թիվ 117 կանոնակարգի VI հավելվածում եւ դրա հետագա փոփոխություններում նշված մասնագրերին եւ ցանկալի է, որ ունենա հետեւյալ թույլատրելի շեղումները (σ_z).

- i) C1 եւ C2 դասի անվադողերի համար՝ 0,075 կգ/տ-ից ոչ ավելի, եւ
- ii) C3 դասի անվադողերի համար՝ 0,06 կգ/տ-ից ոչ ավելի:

Եթե փորձարկման լաբորատորիայի թույլատրելի շեղումներն (σ_z) ավելի բարձր են, քան երեք չափումներով ստացված վերոնշյալ արժեքները, ապա չափումների կրկնությունների թիվը ավելացվում է հետեւյալ եղանակով.

$n = (\sigma_z/y)^2$, որը կլորացվում է մինչեւ ամենամոտ բարձր ամբողջական թիվը

որտեղ՝

$y = 0,043$ կգ/տ՝ C1 եւ C2 դասի անվադողերի համար.

$\gamma = 0,035$ կգ/տ՝ C3 դասի անվադողերի համար:

6. ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Ցանցի մեկ էտալոնային լաբորատորիան (l) հաշվարկում է փորձարկման լաբորատորիայի (փ), $A2_{\text{փ}}$ եւ $B2_{\text{փ}}$, գծային ռեգրեսիան հետեւյալ բանաձեւով.

$$\eta < \rho_{\Sigma, l} = A2_{\text{փ}} \times \eta < \rho_{\Sigma, \text{փ}} + B2_{\text{փ}}$$

որտեղ՝

$\eta < \rho_{\Sigma, l}$ -ն «լ» էտալոնային լաբորատորիայում չափված պտույտի հակազդման գործակցի արժեքն է (այդ թվում՝ ջերմաստիճանի եւ արգելակի թմբուկի հետ կապված ճշգրտումները).

$\eta < \rho_{\Sigma, \text{փ}}$ -ն «փ» էտալոնային լաբորատորիայում չափված պտույտի հակազդման գործակցի արժեքն է (այդ թվում՝ ջերմաստիճանին եւ արգելակի թմբուկի հետ կապված ճշգրտումները):

Փորձարկման լաբորատորիայում փորձարկված անվադողերի համապատասխանեցված $\eta < \rho$ -ն չափվում է հետեւյալ բանաձեւով.

$$\eta < \rho = (A1_l \times A2_{\text{փ}}) \times \eta < \rho_{\Sigma, \text{փ}} + (A1_l \times B2_{\text{փ}} + B1_l)$$
